ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԼԻԱՆԱ ՔԵՖԵԼԱԿՍՋՅԱՆ

ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Պ. ՊՈՌՇՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայ ազգագրությունը ընտանիքի եւ ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ բավականին հարուստ աղբյուրագիտական նյութ եւ գիտական գրականություն ունի: Այս շարքում ուրույն տեղ է գրավում գեղարվեստական գրականությունը, որը, ցավոք, դեռ պատշաճ ուշադրության չի արժանացել: Այսօր գրական գործերի հանգամանալից ուսումնասիրման արդյունքում վեր են հանվում ազգագրական արժեքավոր նյութեր, որոնք դրվում են գիտական շրջանառության մեջ: Դա հնարավորություն է տալիս ճշտել արդեն հրապարակի վրա եղած նյութերի հավաստիությունը: Այս շարքում առանձնանում է գեղարվեստական այն գրականությունը, որի հեղինակը կենցաղագիր է[1]: «Կենցաղագրությունը... սրանում է նաեւ ազգագրական բնույթ եւ կարեւորն է, ինչ-որ չափով փոխարինում է բանահավաքչական աշխատանքին»[2]:

Հանդես գալով բանահավաքի դերում՝ կենցաղագիր հեղինակը անձնական դիտարկումների արդյունքում կարողանում է հարուստ ազգագրական եւ բանահյուսական նյութեր գրառել: Հայ գրականության մեջ ազգագրական հարուստ նյութերով, ավանդություններով, ինքնատիպությամբ, յուրահատուկ լեզվառճով առանձնանում են Պ. Պոռշյանի ստեղծագործությունները:

1890 թվականին, երբ տոնվում էր Պերճ Պոռշյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանը, Ավետիք Արասխանյանը «Մուրճ» ամսագրում գրում է. «Այսօր ահա Պերճ Պոռշյանցն է, որի վրա դարձած է ընդհանուրի ուշադրությունը, ականավոր աշակերտը մեծ Աբովյանի, նկարագրողը մեր ժողովրդական կյանքի՝ որպես ոչ մեկ ուրիշը մեր գրականության մեջ, անկասկած առաջինը բուն ժողովրդական գրականության մեջ»[3]:

Պ.Պոռշյանն առաջիններից մեկն էր, որ ազգագրությունը կապում էր գեղարվեստական գրականության հետ եւ «հայ մարդու հատկությունը» բխեցնում է տեղային գավառական կենցաղից ու սովորություններից: Ընթերցելով Պ. Պոռշյանի ցանկացած գործ՝ հասկանալի է դառնում, որ «ազգությունը պահպանող միջոցներն» են՝ ազգային ծեսերը, սովորույթներն ու ավանդությունները, եւ հարկ է դրանք ի լույս հանել «այս լուսավորյալ դարում» «մեր նախնի ժողովրդի հոգվո պատկերը» անեղծ պահելու համար: Նա բացատրում է այդ հոգեւոր իրողության ներգործիչ դերը, «որովհետեւ այն սովորությունքը, որ բուն մեր ազգի հոգին են ցույց տալիս, հայկական հանճարո ծնունդ են, բոլորը պարունակում են յուրյանց մեջ մեծ բա-

1 **Ա. Պետրոսյան**, Ժողովրդագիտական փվյալների արտացոլումը Պերճ Պոռշյանի երկերում. «Պատմաբանասիրական հանդես», 2009, թ. 1, էջ 88:

2 **Կ. Դանիելյան**,Հայ գյուղագրությունը ԺԹ դարում (1860-1890), Եր.,1973, էջ 349:

3 **Պ. Պոռշյան**,Երկեր, Հայ դասականների գրադարան, Եր.,1984, էջ 4:

բոյական դասեր, որոնք որ ժողովուրդը թեեւ գվարճությամբ գործ է դնում, բայց մեծ բաներ է ուսանում նրանցից»[4]: Հասկանալի է, որ այս բարոյական դասերը ուսանելով՝ յուրաքանչյուր հայ կփորձի իր մեջ կենդանի պահել «հայության զգացմունքը»: Ազգային ոգու, ազգային տիպարի, ազգային հոգեբանության դիպուկ բնորոշումները տալով՝ խոստովանում է. «սակայն ցավալին այս է, որ մենք այժմ ոչ թե ջան ի գործ ենք լինում այն սովորությունքն ի լույս հանել, այլ ընդհակառակն, ծաղր համարելով ամոթ կարծում կարդալն անգամ, թող թե ի գործ դնելը»[5]: Ինչեւիցե, Պռոշյանին չեն ընկճել հասարակության այս ըմբռնումները, եւ նա փորձել է «այն անգին ավանդությանց հիշատակները, որոնք բոլորը մեր ազգի կենաց տիպն են պարունակում իրենց մեջ, մինչեւ հավիտյանս հասցնել»[6]:

Եւ իսկապես, Պ. Պռոշյանի ստեղծագործությունը հայ մարդու, հայ ընտանիքի, կենցաղի, սովորույթի, բառ ու բանի շտեմարան է՝ հյուսված անմրցակից ազգագրական բարքագրական շերտերով ու ընդգրկումներով, նահապետական հարաբերությունների պարզորոշ նկարագրությամբ: Նրա աշխատանքներում առկա հարուստ ազգագրական նյութից այս հոդվածի շրջանակներում փորձել ենք ներկայացնել ներընտանեկան հարաբերությունների համակարգը:

Ազգագրության մեջ հայ ժողովրդի ընտանեկան կենցաղն ուսումնասիրողին վիճակված է գործ ունենալ ընտանիքի երկու հիմնական ձեւի՝ նահապետական մեծ ընտանիքի՝ գերդաստանի եւ դրանից տարանջատված անհատական, փոքր ընտանիքի հետ: Այս ձեւերը միմյանցից էապես տարբերվում են ինչպես տնտեսական ու իրավական հիմքով, այնպես կազմով ու կառույցով:

Մինչեւ ԺԹ դարի 60-ական թթ. ընտանիքի միակ ու վաղնջական ձեւն անվերապահորեն դիտվում էր մեծ ընտանիքը կամ ընտանեկան համայնքը: Ըստ Ֆ. Էնգելսի՝ մեծ ընտանիքը «համայնք» դիտելու կարեւորագույն չափանիշ է համարվում այն, որ «ընդգրկում է մեկ հոր զավակների մի քանի սերունդ իրենց կանանցով, ընդ որում նրանք բոլորն ապրում են միասին նույն հարկի տակ, համատեղ մշակում են իրենց դաշտերը, սնվում ու զգեստավորվում են ընդհանուր պաշարներով»[7]: Ընտանեկան համայնքը պատմականորեն համարվում է նահապետական տոհմական կարգի հիմնական հասարակական բջիջը[8], որի գոյության տնտեսական հիմքն արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակն է[9]: Հայ ազգագրության մեջ «մեծ ընտանիք» կամ «ընտանեկան համայնք» բառեզրերը ընդունված է անվանել «գերդաստան» բառով: Դրա հետ մեկտեղ «գերդաստան» բառը գործածվել է նաեւ փոքր ընտանիքներն ընդգրկող ազգակցական խումբը մատնանշելու դեպքում՝ իբրեւ ազգ անվան հոմանիշ: Հայաստանի պատմաազգագրական մարզերում գերդաստանն անվանվել է տարբեր կերպ: Օրինակ՝ Աղձնիքում այն կոչվել է «տուն», «մեծ տուն», քրդախառն բնակավայրերում, մասնավորապես Սասունում, Խութում նաեւ «քոչ»: Ի դեպ, «քոչ» բառեզրը գերդաստան, մեծ ընտանիք նշանակելուց բացի՝ օգտագործվել է նաեւ

4 **Պ. Պռոշյան**, Սոս եւ Վարդիթեր, Երկերի ժողովածու, հ.1, Եր.,1962, էջ 52:
5 Անդ, էջ 57:
6 Տե՛ս անդ:
7 **Ֆ. Էնգելս**, Ընտանիքի մասնավոր սեփականության եւ պետության ծագումը,Եր.,1965, էջ 77:
8 Տե՛ս **М. Косвен**,Семейная община и патрономия, М., 1963, էջ 6:
9 Տե՛ս **Э.Карапетян,** Армянская семейная община, Москва, 1968, էջ 5:

տան կին, տան տիկին իմաստով («քոչը տանը չէ»-տան տիկինը տանը չէ»)[10], իսկ ահա Զանգեզուրում ժողովրդական բարբառում տոհմ, գերդաստան, ընտանիք բառերը փոխարինված են օջախ, տուն, ծուխ բառերով: Չեն ասում մեր ընտանիքը մեծ է, այլ՝ «մէր օջախը, մեր տօնը մէծ ա, մեր օջախում այսքան տղամարդ ու կին կա»:

Պ. Պռոշյանի ստեղծագործություններում ուշագրավ վկայություններ կան այս ոլորտի վերաբերյալ: Քանի որ կենցաղագիրը իրականությունը տեսնում է մոտիկից, որպես ականատես կարողանում է պարզորոշ նկարագրել գյուղի անցյալը, գերդաստանական ընտանիքները, դրանցում տիրող բարքերը, կարգ ու կանոնները: Պ. Պռոշյանի ստեղծագործություններում որեւէ տեղ չի գործածվում գերդաստան բառը: Դրա փոխարեն օգտագործվում է «Աբրահամի օջախ» արտահայտությունը. «Հայր Աբրահամու օջախ կոչվելու տներ այսօր հազվագյուտ երեւույթ են դարձել, իսկ 25, 30 տարի առաջ եւ ավելի խորը, դա մի զարմանալի բան չէր: Հայր Աբրահամի օջախ էր կոչվում այն օրհնյալ տունը, որի ծերունի հայր-նահապետը, բոլորած յուր շուրջը բազմաթիվ եղբայրների, հորեղբոր զավակների ու թոռների, նրանց որդկերան ու թոռան թոռներին, քաջափորձ զորականի անձնաապաստան հմտություններով ղեկավարում էր շարժուն զորքարանը, ընդհանուր հրամաններ էր արձակում եւ բոլոր անդամներից իրանց գործառնությանց հաշիվն ու համարն էր պահանջում»[11]:

Գերդաստանը բնորոշվում էր համեմատաբար բարդ կազմով ու կառուցվածքով: Ըստ նահապետական սովորության՝ մի տան մեջ կարելի է գտնել միեւնույն նախահոր ամենահեռավոր թոռների ու ծոռների: Կան տներ, որտեղ ապրել են 70-80 հոգի: Այդպիսի ընտանիքներում Վ. Պետրոյանի հավաստմամբ՝ «7-10 օրորոց էր օրորվում»[12], Ղ. Աղայանի վկայությամբ «Միանգամից ութ-ինն օրորոց էր օրորվում, չորս-հինգ թորոն հաց էր թխվում ասրծու օրը: Երկու գութան էր դուրս գալի այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու գոմեշ էր կթվում, սուրվով ոչխարներ, բոլուկներով խոզեր, իլխիներով ձիաներ էին պահում»[13]: Իսկ ահա Պ. Պռոշյանի վկայությամբ պարսկական Սալմաստ քաղաքի գյուղերից մեկում (գյուղը կոնկրետ չի նշվում) 80 հոգուց բաղկացած հայ ընտանիքում միաժամանակ «20-ից ավելի օրորոցներ կային, որոնց մի քանիսի մոտ 8-9 տարեկան աղջիկներ կանգնած շարժում են օրորոցը»[14]: Ինչպես ցույց են տալիս Է. Կարապետյանի ուսումնասիրությունները ԺԹ դարի վերջին-Ի դարի սկզբներին 4 սերունդ եւ 30-40 հոգի ընդգրկող գերդաստաններն արեւելահայոց մեջ արդեն սակավադեպ էին, մինչդեռ Արեւմտյան Հայաստանում, քանակապես գերակշռում էին փոքր ընտանիքները: Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը նահապետական գերդաստանները դեռեւս կենցաղավարման որոշակի հիմք ու ավանդույթներ ունեին:

Պ. Պռոշյանն ավելի քան մի այլ գրող կապված էր գյուղական միջավայրի հետ. նա ապրելով նրանց հետ, ունենալով նույն հոգսերն ու խնդիրները, կարողացել է ի հայտ է բերել մի ամբողջ ժամանակաշրջանի պատմություն, ժամանակաշրջան, որը բնորոշվում է տնտեսական ու սոցիալական տեղաշարժերով: Ահա այս շրջանի սոցիալական հեղաբեկումը, սոցիալական վերահաս չարիքները կամ այլ կերպ ասած կապիտալիստական ապրանքադ-

10 **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ընտանիքը եւ ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004, էջ 64:
11 Պռոշյան, Բղդե, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., էջ 159:
12 **Վ. Պետրոյան**, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 221:
13 **Ղ. Աղայան,** Երկու քույր, Երկերի ժողովածու, հ.1, Եր., 1967, էջ168:
14 **Պ. Պռոշյան**, Շահեն,Երկերի ժողովածու, հ. 2, Եր.,1962, էջ 402:

բամային հարաբերությունների ասպիճանական մուտքը գյուղ հանգեցրեց բնափակ տնտեսության քայքայմանը, որն էլ իր հերթին բերեց գերդասպանների փլուզման եւ ինչպես Մ. Կոսվենն է ասել. «Բնափակ տնտեսությունը եւ արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը պայմանավորում է արտադրական մեծ կոլեկտիվների համակե-ցություն»[15], չկա բնափակ տնտեսություն, չկա եւ մեծ կոլեկտիվների համակեցություն:

Կապիտալիստական հարաբերությունների առաջացումը գյուղում, փոխանա-կության եւ փողի իշխանության աճը հեղաշրջում էր առաջ բերում մարդկանց հոգեբանության մեջ, ասպիճանաբար դուրս վտարում նահապետական կյանքի փիլիսոփայությունը: «Հիմի սաղ աշխարհքը փոխվել ա» կենցաղի արտասովոր փոփոխությունն արտահայտող այս դիպուկ բնորոշումը բազմիցս կարելի է լսել Պ. Պռոշյանի հերոսներից, որոնք իրենց իսկ վրա են զգում վերահաս աղետները:

Տարբեր մշակութային համակարգերում, այդ թվում եւ հայկականում, հար-յուրամյակներ շարունակ ընտանիքի բարեկեցության երաշխավորը եղել է տղամարդը: Հայոց մշակույթում բանաձեւվել է «տղամարդը դրսի պատն է, կինը՝ ներսի» ժողովրդական ասացվածքը[16]: Դարերի ընթացքում ձեւավորվել էր նաեւ ընտանիքում, ըստ համեմատական տարիքի, յուրաքանչյուրի պարտականությունները:

Ընտանիքի գլխավորը սովորաբար լինում է ավագագույն անդամը՝ պապը կամ ատուն (Աշտարակի շրջանում պապին դիմելու ձեւ) եւ նրա մահից հետո նրա ավագ եղբայրը, իսկ հորեղբայրների բացակայության դեպքում՝ ավագ որդին: Հայ իրականության մեջ տան ավագը տարբեր անուններով է հայտնի. «տանուտեր», «տան մեծ», «տան խոսող», սպիտակամորուք, «տան ղեկող»: Նա վայելում էր ընդհանուրի համակրանքն ու հարգանքը. «նրան էր հնազանդում ամեն մի անդամը, նրա կառավարության եւ խնամքի տակ էին գտնվում այդ մեծ տան բոլոր գործերը եւ նրա վզին էր մտածել ուղիղ եւ անսայթաք ղեկավարելու մի այդպիսի ահագին նավը»[17]: Նրա ներկայությամբ ոչ միայն հարսները չէին կարող նստել, այլեւ կրտսեր բոլոր տղամարդիկ, միայն նրա կարգադրությամբ պետք է նստեին. «այն ժամանակ մեծ սրահի չորս պատի տակը կարգով շարվում էին բոլորը եւ մեկ-մեկ հաշիվ էին տալիս յուրյանց օրվան կատարած գործերի մասին, որքան վար ու ցանքս են արել, քանի բարդ ցորեն է հնձվել ու եղին դրել, ինչքան խոտ են ժողովել, խուրձը կապել, ինչ դրությունի մեջ է այգիների աշխատանքը, անվնաս է ոչխարի հոտը եւ այլն»[18]: Այս ամենը ճշտելուց հետո նա տնօրինում էր հաջորդ օրվա անելիք գործերը: Ընդհանուր խոսակցությունը շարունակվում էր զանազան առարկաների շուրջ, եւ յուրաքանչյուր մարդ ազատ էր՝ համեստորեն յուր կարծիքը հայտնելու: Դա հատուկ էր Պ. Պռոշյանի նկարագրած գերդասպանին, եւ «այս արտոնությունը տվել էր պապը յուր գերդասպանի անդամներին, որ ինչպես ինքը բացատրում էր, նրանք կարողանան ժամանակին մարդամեջ մտնել»[19]: Ընտանիքի պապը լսում էր նրանց խնդիրները, խորհուրդներ տալիս: Մեջբերենք մի հատված, որտեղ սկեսրայրը փոքր հարսին խրատում է, թե նա ինչպես իրեն պետք է պահի հոր տանը. «Չլնիմ-չիմանամ, որ

15 **М. Косвен**, նշվ.աշխ., էջ 56:
16 **Մ. Գաբրիելյան**,Հայկական ընտանիքն անցումային շրջանում, Եր., 2005, էջ 111:
17 **Պ. Պռոշյան**, Շահեն, էջ 400:
18 Անդ:
19 **Պ. Պռոշյան**, Շահեն, էջ 400:

քողը երեսիցդ վեր ա կացել հորանցդ տանը, հենց արա, որ հարեւանները քու շվաքը տեսնիլ չի կարենան, հորդ ու մորդ լավ պատիվ տուր, իրիկունը քնելուց ոտները տրորի, ոնց որ մեր տանն իմն ու տեգերտանցդ տրորում ես, շորերը հանելուս թեւը քաշի, առաջ նրանց քնացրու, հետո դու գնա քնիր, առավոտենց տեղիցդ ծեգելահան վեր կաց, տներն ավլի, ուսաշորդ քցի, կուժն ուսի, գնա ջուր բեր, հորդ ձեռին ջուր ածա, որդի հենց արա մեզ չի ամանչացնես, ըստուց հետո ինչ պակասություն ունենաս մերն ա»[20]:

Ընտանիքի միասնության գաղափարը շաղկապված էր ընդհանուր տան եւ ընդհանուր կրակի հետ: Նոր բաժանված ընտանիքի օջախի կրակը վառվում է հայրական օջախից, որը բերում է կա՛մ ընտանիքի հայրը, կա՛մ ընտանիքի ավագ անդամներից մեկը: Սրանով շեշտվում էր, որ թեեւ նրանք բաժանվել են, բայց օջախի ամբողջությունը պահպանվում է, արյունակցական, ազգակցական կապը մնում է: Արյունակցական, ազգակցական կապը հատկապես նկատելի էր դառնում տոներին, հարսանեկան, թաղման արարողություններին եւ ընդհանրապես տարբեր առիթներով միմյանց փոխօգնության հասնելու ժամանակ: Վերը նշվածի վառ օրինակ է աշտարակյան գերդաստանը՝ «տան նախանդամը կամ ծերունին շուրջն արած յուր բոլոր գերդաստանը, շարվել է քուրսու տակը բերանփակեք անելու: Այստեղ ահա նահապետական սուրբ ավանդությունը պարզ արտափայլում է, տան նահապետը յուր լիազոր իրավունքի մեջ է. ամենքը նրա աչքին են նայում, նրանից ակնածում: Իսկ մեր պապը կամ ափուն համեստ եւ զվարճալի բարոյական առակներով զովում է պասը: Բաժանված փոքր եղբայրներ, հորեղբոր որդիք, ամուսնացած աղջիկներ յուրյանց այրերի եւ զավակների հետ՝ բոլորը հավաքվում են յուրյանց ազգապետ ծերունու մոտ՝ նրա օրհնությունն առնելով, նրա հետ միասին բերանփակեք անելու: Ազգապետի տանը ոչինչ նոր պատրաստություն չի տեսնվելու, ամեն եկող ընտանիք յուր հետ բերում է բարեկենդանից մնացորդ ուտելիքներն եւ մի գավ գինի ու խառնում նրանց տան եղածի հետ: Այս երեկո օջախ չպիտի վառվի, պապոնց օջախիցը միայն ծուխ պտի բարձրանա, էն էլ բերանփակեքի ձվածեղն անելու համար»[21]:

Նշեցինք, որ տան բեռը, հոգսը, սենդի հայթայթման ողջ ծանրությունը ընկած էր ընտանիքի հոր վրա, բայց պետք է ընդունենք այն, որ կկաղար գործը, եթե հայր-նահապետին տան ներքին կառավարման մեջ աջակից չլիներ մայր-տանտիկինը՝ ընդհանուրի հարգանքը վայելող ու հրամայող մեծ նանը, որի ձեռքին էր տանտիկնության շերեփը, որի քաղցր խոսքը պատվեր էր իգական սեռի բոլոր անդամների համար[22]: Քանի դեռ հայրը կենդանի է, նա երկրորդական դեր է խաղում, իսկ նրա մահից հետո անմիջապես միահեծան դեր է դառնում եւ վայելում ընդհանուրի հարգանքը:

Ի հավելումն վերը գրվածի՝ նշենք, որ առանց ազիի կամ մեծ նանի տնօրինության եւ խորհրդի ոչինչ չի արվում՝ «թողունք մի հարկի տակ ժողոված անբաժան եղբայրներին, որոնք ամեն երեկո մանրամասնորեն հաշիվ պետք է տան յուրյանց մորը բոլոր կատարած գործողությանց համար-բաժանված եւ անհամաձայն որդիքն էլ առանձնապես յուրյանց մո-

20 **Պ. Պոռշյան,** Սոս եւ Վարդիթեր, էջ 64:
21 **Պ. Պոռշյան,**Հացի խնդիր, հ.2, էջ 80:
22 **Պ. Պոռշյան**, Բդդե, էջ 159:

բը պետք է հաղորդեն յուրյանց գործելիքը եւ լսեն խորհուրդները»[23]: Որդիների բաժանման ժամանակ նանն ապրում է նրանցից մեկի տանը, որն ավելի իր հսկողությունների կարիքն ունի, որի երեխաները փոքր են կամ կինը ավելի պատանի ու անփորձ է: Դրա հետ մեկտեղ նա լիակատար իրավունք է վերապահում որդիների տները իր սեփականությունը համարել, կարգադրել, բարեկամներին հյուրասիրել, կերակուր եփել եւ առանց հարսին հարցնելու՝ բաժիններ ուղարկել իր մյուս որդիներին, աղջիկներին եւ չքավոր հարեւաններին. «նա մեծ նանն է, քանի որդի ունի էնքան էլ տուն ու օջախ ունի, էնքան էլ շերեփ կա ձեռքին»[24]:

40-ից 80 հոգի մի ընտանիք են կազմել, եւ այդ փոքրիկ գյուղի ամբությունը մեծ նանն է եղել, նա է յուր ձեռքովն ամենքին յուր արժանավորության համեմատ բաժին տվել, ու նրա արածի վրա ոչ ոք չի տրտնջացել: Քարսիրտ ու խիստ էր երեւում մեծ նանը. «մեծ պապն էլ յուր ոտքովը գար, նրա խոսքը չէր կարող փոխել»: Նա մեկ անգամ իր հաստատակամությունը ցույց էր տվե, եւ նրա խոսքն օրենք էր համարվել. «հերիք էր, եթե խեթ հայացք ձգեր մեկի վրա, ամենքը մուկ կդառնային», «լաց մի ըլի բալա ջան, մեծ նանը քեզ էլ, ինձ էլ դուրս կանի, կերակուր չի տալ»[25]: Այսպիսի մեծ նաները ոչ միայն իրենց ընտանիքներում, այլեւ գյուղում հարգ ու պատիվ ունեին, հարսանիքներում, «մահենիքներում» կանանց սուփրի վրա միշտ պատվավոր վերին կողմն էին բազմում: Գյուղական մի ծանրակշիռ հարցի լուծում տալու համար այսպիսի մեծ նաներից էին խորհուրդ հարցնում, հատկապես եթե խնդիրը վերաբերում էր ընտանեկան կյանքին:

Մեծ նանը նաեւ գործերի բաժանում էր կատարում: Երկրորդ տեղը կանանց մեջ պատկանում էր ավագ հարսին, որին սկեսուրը դեռ կենդանության օրոք պատրաստում էր իր հաջորդը լինելուն: Կանանց մեջ աշխատանքի բաշխումը դարերի ընթացքում այն աստիճանի որոշակի էր սահմանված, որ սկեսուրը մեծ դժվարություններով էր այդ կարգը խախտում: Օրինակ՝ երկրորդ հարսի պարտա-կանությունն էր ալյուր մաղելը, խմոր հունցելը, հաց բաց անելը, երրորդինը՝ տուն ավլելը, սեղան պատրաստելը, կերակուր մատուցելը, ամաններ լվանալը, երեկոյան տղամարդկանց ոտքերը լվանալը, ձեռքերին ջուր ածելը եւ այլն: Եթե տան մեջ լինում է մի հարս եւս, այս վերջին պարտականությունների մի մասն անցնում էր նրան:

Շորերը հանում էր նախ տան մեծը, փոքր հարսն օգնում էր շորերը հանելիս եւ տրեխները արձակելու ժամանակ: Հետո հանվում էին նրա ավագ եղբայրը, ավագ որդին եւ հերթով բոլոր տղամարդիկ: Տղամարդկանց պառկելուց հետո միայն կանայք կարող էին պառկել. նախ պառկում էր սկեսուրը, որին հանվելիս օգնում էր կրկին ամենակրտսեր հարսը: Հարսները հարսնություն էին անում, այսինքն՝ չէին խոսում սկեսրայրի եւ մեծ տեգրերի հետ մինչեւ մահ, սկեսուրի հետ առնվազն տասը տարի, բացի առաջին հարսից, որը նրա անձնափոխանորդն էր եւ հարսնություն էր անում մինչեւ երկրորդ հարսին տուն բերելը: Չէին խոսում փոքր տեգրերի եւ տալերի հետ կես տարուց մինչեւ չորս տարի: Երբ հարկ էր լինում խոսելու, դիմում էին միմիկային կամ փոքր տալի միջնորդությանը եւ կամ ցածր, պարզ լսելի ձայնով իրենց ասելիքը ուղղում էին փոքր երեխաներին: Հարսները խոսում էին միմյանց հետ

23 **Պ. Պոռշյան**, Կռվածաղիկ, Երկերի ժողովածու, հ. 3, Եր.,1963, էջ 214:
24 Անդ:
25 **Պ. Պոռշյան**, Կռվածաղիկ, էջ 215:

սկեսուրի կամ մեծ հարսի բացակայության ժամանակ, որովհետեւ մեծ հարսի առաջ էլ էին հարսնություն անում:

Ծեծն ընտանիքում հաճախակի էր. որդիները պատժվում էին հոր, աղջիկներն ու հարսները մոր կողմից: Եղել են դեպքեր, երբ «հարսը յուր սկեսուրի ներկայությամբ թթու երես ցույց տա, յուր մրթմրթոցի ձայնը մի քիչ բարձրացնի, նրա ներկայությամբ ինքը կերակրի պղնձին, եղի պուլիկին ու փոշեմանին մոտ գնա ինքնագլուխ, տես թե քանի ատամը վայր կթափվի, տես թե տաք-տաք շերեփը որ նանի ձեռին պատրաստ է, ինչ տեղ կդաղի: Դեռ սկեսոր խփածը նախատոնեքն է, տոնը նանի որդին՝ մեր հարսի ամուսինը վերջը կգա կլսի ու կկատարի»[26]: Յուրօրինակ եւ արտասովոր մտայնությամբ է մեկնաբանվում ամուսնու կողմից կնոջը ծեծելու երեւույթը. «ծեծելուց ով ա մեռել,որ ես մեռնեի,որ կնիկը իր մարդիցը ծեծ չի ուտում, բաս ընչի ա տղամարդ, որ իր կնկանը խրատեր ոչ, ծեծելն էլա աղաթ, սիրելն էլ»[27]:

Բայց «եթե որդին էնքան կնիկ մարդ եղավ, որ իր կնկանը կնկություն արեց», նրան չկարողացավ զսպել, նա ինքն էլ, իր կինն էլ ողջ գյուղումը «թուք ու բեղնամ կըլին»,նրանց անունը հողի հետ կհավասարվի,«հասարակաց բերանն այնպիսի մարդին «կնկակնիկ», իսկ կնոջը լկտված ու անամոթ բառերով կկնքվի»[28]:

Պ. Պռոշյանի ստեղծագործություններում կարելի է հանդիպել մի շարք առածների եւ արտահայտությունների, որոնք թեեւ առաջին հայացքից հակասում են միմյանց, բայց ընդհանուր վերլուծության արդյունքում ընդհանրացնում են հայ կնոջ կերպարը՝ «կին արմատը փոփոխական է, նրանք կամք չունեն, նրա մազը երկար կըլի, խելքը՝ կարճ», մյուս կողմից՝ «անումն էն ա, սաքի, որ տան գլուխը մենք ենք, շատ սուտ ա, դարդակ, սիրտ հովացնելու խոսքեր, տղամարդը կնիկ արմատի անհախ, անվարձ ծառան ա ու նրա սրտի ցանկությունների կատարողը: Կնիկն էլ որ կա տղամարդի հոգին ա, ինչ ուզում ես մտքումդ դիր–տունդ ոնց կառավարես, գործդ ինչպես տանես, ինչ բան բռնես, որդուտ երբ պսակես, ում աղջիկն ուզես, ոնց նստես, վեր կենաս, ես ինչ գիտեմ ամեն բան ու գործիդ, տնային կառավարությունիդ մեջ ընչանք կնկանդ մատը խառը չըլնի մինչեւ նրա սրտովը չըլնի,գլուխ չի գալ»:[29]

Ժամանակների, կարգերի փոփոխությունը երկփեղկում է հնամենի սովորույթներն ու ապրելակերպը: Կյանքի ասպարեզ են ելնում դրամի հերոսները, որոնք անողոքաբար տրորում են սրբագործված օրենքները՝ այն ոչնչացնելով սառը հաշվարկի եսապաշտական բնազդի մեջ: Որպես ասվածի ապացույց՝ բերենք Բալասան աղայի՝ բուրժուականացող գյուղի սյուներից մեկի խոսքը. «Միշտ այդպես է-թույլը զորեղի համար է ստեղծված, արջը գայլին է խեղդում, գայլը ոչխարին, աղվեսը հավին, կատուն մկանը: Երբ ես լսել, որ մուկը կատվին հաղթի, աշխարհքս էդպես եկել է, էդպես էլ շարունակվելու է: Ինձանից ձեզ խորհուրդ. ձեռքդ ընկավ, տեսար որ քեզնից անուժ է փշրի, ոչնչացրու մեջտեղից քո օգուտը հանիր»[30]: Ցոփ ու շվայտ կյանք վայելող Բալասան աղան՝ թույլին ճզմելու, «դրամի բարոյականության» դաժան սկզբունքով առաջնորդվող այդ անձը, մոռացության է մատնում

26 **Պ. Պռոշյան**,Կռվածաղիկ, հ. 3, էջ 215:
27 Անդ, էջ 68:
28 Անդ, էջ 215:
29 **Պ.Պռոշյան**, Ցեցեր, հ. 3, էջ 400:
30 Անդ, էջ 445:

անգամ ծնողներին՝ ամաչելով նրանց գավառական լինելուց. «Օղորմածիկ հերս էլ, որ կենդանի լիներ, վերես չէի թողնիլ, ինչ կասեն ինձ իմ ընկերները,չէին ասիլ, թե սա ինչ մարդ է, որ իր հայրը սա է», կամ՝ «Լուսահոգի մորս մեզ հետ սեղան չէինք նստացնում, քոծի հետ էինք ճաշ տալիս: Դե գյուղացի մուժիկի պառավ կին է նրան ինչ վայել էր գլխաբաց հասկացող հարսի հետ ձգվել»[31]:

Նահապետական բարքերի տեր գյուղացու համար դժվար էր ընդունել «ադաթի» դանդաղ անհետացումը եւ նոր բարքերի մուտքը՝ «մեր ատաթումը կա ոչ, որ մի մենծ կնիկ արմատ, յա մի տղամարդ էլած տեղը աղջկա պռոշը պռոշին զա, թե քաղաքի (Թիֆլիս) պես ըլներ, որ ասում են, կնանիք մարդկանց հետ զրից են անում, աղջկեք էլ խաղալուս տղեքանց կուռը բռնում են խաղում, ում որ սրտներն ուզում ա, ես գիտեմ թե էն վախտը արեւը որտեղ մեր կմտներ, համա նրանց մեռելն իրանց տեղն են թաղում, մերն էստեղ»[32]: Ակամա փոխվում էին մարդիկ, նրանց մտածելակերպը: Եթե նախկինում «գերամեծար» ծնողին գանգատվելու սպառնալիքով էին վախեցնում «մոլորյալ ոչխարին», ապա նոր բարքերի մուտքով նրա դերն անտեսվեց. «հիմի հլա մի քիչ վրեդ հալ կա,էլի պատիվ ունիս, քիչ ու միչ խոսքդ անկանջ են անում, հազար խոսքիցդ մինը պարանի են դնում, դու կաց պառավիս, տես ոնց են գլխիդ տալի աչքդ հանում, բերնիդ էլ մտիկ չեն անում: Տեսնում ես, որ ես երկու խոսում եմ, ասում են հալիվորել ես, խելքդ եր ա տվել: Իմ մերը հարիր տարեկան պառավ էր, ես նրա առաջին չէի կարող բերանս շարժել, հարսների սասը հո դեռ նրա անկաջը չէր ընկել-մինն էլ դու էիր, տեսար, հիմի տեսնում ես, մի բան ասելուս հարսդ քեզնից բարձր ա գոռում, որ դու տակիդ չորանում ես, թե հիմի կտա աչքս կհանի»[33]:

Նահապետական հայցաքներով օժտված մարդու համար դժվար էր ընդունել ժամանակների նման փոփոխությունը. նախկինում հարս են բերել դեմքը փակ, եւ 7 տարի նրա դեմքը ոչ ոք չի տեսել, բայց այսօր ահա «հարսին նստացնում են հետները հաց ուտացնում, 2 տարի չի անց կենում հարսը կեսորից բարձր ա խոսում, հիմիկվան հարսները իրանց կեսուրների գլխին խանում են գալի, մի բանի դնելիս՝ նոթերը կիտում են, պնչները օխտը գալ կախմ քցում»[34], եւ այս ամենին ականատես մարդուն մնում էր միայն ասել. «խեր ու բարաքյաթն էլ էն վախտն էր, սեր ու սոհբաթն էլ»: Բարոյական նորմերն էլ այլեւս այն չեն թվում, ինչ որ առաջ: Եւ այս ամենի հանդեպ անզոր գյուղացուն մնում էր միայն երկյուղ տածել վաղվա օրվա հանդեպ. «Վայ մեզնից հետո եկողներին, ջուրն եկել ա նրանց տարել, նրանք ավելի բեթար պտի ըլնին» եւ անցած օրերին երանի տալ. «ափսոս ժամանակ, անցկացած օրերին օր չի հասնիլ, մեր վախտն էլ մի վախտ էր, թռավ էլ ձեռ չի ընկնիլ»:

Պ. Պռոշյանի ստեղծագործությունները գեղարվեստական խոսքի, ժողովրդական բանահյուսության ու ազգագրական նյութերի համադրման փայլուն օրինակ են: Նրա գեղարվեստական ժառանգության մեջ եղած ազգագրական վկայությունները մեզ հնարավորություն են ընձեռում վեր հանել ԺԹ դարի երկրորդ կեսի եւ Ի դարի սկզբների հայ հասարակության ընտանեկան կենցաղի, ներընտանեկան հարաբերությունների, տոների, քաղաքական, տնտեսական եւ սոցիալական իրավիճակի ազգագրական պատկերը:

31 **Պ. Պռոշյան**, Ցեցեր, էջ 442:
32 **Պ. Պռոշյան**, Սոս եւ Վարդիթեր, էջ 197:
33 Անդ, էջ 172-173:
34 Անդ ,էջ 124: